տալիս նրանց սրտերին, հոգուն, երեւակայութեանը: Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իդէալներ, բարձր հանրամարդկային իդէալներ: Եթէ ներկայի մէջ չէ գտնում իր իդէալների տիպարները, նա մտնում է պատմութեան խորքը՝ եւ ժամանակների հնութիւնից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին, եւ նրանց պատկերները՝ իրանց վսեմ գործերի նկարագիրներով՝ դնում է ներկայ սերունդի առջեւ, որ նրանցից օրինակ առնեն եւ նրանց նման լինեն: Նա ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մէջ դեռ ծնուած չէին, այլ ապագայում պէտք է յայտնուէին: Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մէջ այդ չծնուած տիպարների ամենափոքրիկ նշմարները միայն: Նա մարգարէի հոգով նախատեսում էր, թէ տարիներից, գուցէ դարերից յետոյ՝ որպէս այդ նշմարները իրանց սաղմնական դրութիւնից կաճէն, կը զարգանան, կը կերպարանագործուէն եւ կատարեալ ձեւ ու կազմութիւն կը ստանան, եւ նրանց պատկերները կանխապէս նկարում է եւ դնում իր ժամանակի հասարակութեան առջեւ: Ճշմարիտ բանաստեղծը գիտէ անցեալը, գիտէ ներկան, գիտէ եւ ապագան: Ժամանակները նրա ձեռքումն են: Իւր հերոսներից մէկի թերութիւնները նա լրացնում է միւսից առած յատկութիւններով, եւ ներկայացնում է իբրեւ կատարելագործուած տիպարներ:

— Մենք ամէն ինչ դպրոցից ենք սպասում, — շարունակեց նա, — բայց ժողովուրդը ինքը մի մեծ դպրոց է, որին պէտք է կրթել, որին պէտք է ուղղութիւն տալ, որի մէջ պէտք է զարգացնել առողջ մտքէր, բարձր գաղափարներ, որի մոլորութիւնները եւ կեղտը պէտք է մաքրել: Իսկ դա այլ կերպ չէ կարող լինել, եթէ չենք տայ նրա ձեռքը ընթերցանութեան գրքեր: Եւ այդ գրքերից ամենազօրեղ կերպով ազդում է նրա վրայ վէպը, բանաստեղծութիւնը: Մի լաւ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ: Այդ կէտից Համրի հայեացքները բոլորովին ճիշտ են: Ինչ ազգ բանաստեղծութիւն չունի, նա հազիւ թէ ընդունակ կը լինի իր համար մի բարւոք դիրք ստեղծել մարդկային հասարակութիւնների մէջ:

— Նա ասաց, որ այժմ մի բան է գրում, ի՞նչ է գրում, — հարցրի ես:

— Հայոց եկեղեցական պատմութիւն է գրում, թէ ինչ փոփոխութեան է ենթարկուել հայոց եկեղեցին, սկսեալ Աբգարի օրերից, երբ առաջին անգամ մտաւ քրիստոնէութիւնը Հայաստանում, մինչեւ մեր օրերը: Եւ գլխաւորապէս պէտք է բացատրէ, թէ ի՞նչ կազմակերպութիւն ունէր Լուսաւորչի հիմնած եկեղեցին:

— Ուրեմն այլեւս վէպեր չէ՞ գրում:

— Գիտե՞ս, նա իր կեանքում շատ է տանջուել, շատ նեղութիւններ է կրել: Նրա կեանքը անցել է մի շարք հալածանքների միջից: Այդ բոլորը մի